



ԻՆՉ ՈՐ ԵՐԱԶԱԾ ԷԻ...



նհավատալի կթվի ինձի այս բոլորը...

Կապրեինք օտար երկրներու մեջ, օտար ափերու վրա, հեռու քաղցր հայրենիքեն, ուրկե, ավա՛ղ, բռնի վտարված էին մեր պապերն ու մեր հայրերը:

Կապրեինք հայրենազուրկ, բայց հայրենիքի վարտուր մեր մատաղ սրտերու խորունկ ծալքերուն մեջ պարուրած...

Ու նստել կվերհիշեմ անցյալը մոտիկ... հոն, անհարազատ հորիզոններու տակ...

Ու կդիտեմ շուրջս, կտեսնիմ խոտտումնալից ներկան, զոր ահա փոքր ժամանակի ի վեր կապրիմ պաշտելի հայրենիքիս մեջ:

Հոն էինք մենք, հոն ծնած ու սնած... թեև չէինք ճանաչած կակիծ ու ցավ, քանի տակավին պատանիներ էինք անհոգ...

Բայց մենք՝ պանդուխտ հայորդիներս կանուխ... շատ կանուխ զգացինք ու ըմբռնեցինք, որ մեզի կպակսեր մարդու համար ամենաթանկագինը՝ հայրենիքը, զոր կախինք կաթոգին:

Կժպտեինք, թե՛ կլայինք, միշտ կխորհեինք, թե ունինք հայրենիք մը՝ Սովետական Հայաստանը, ուր ապրիլ կփափաքեինք մեր հարազատ եղբայրներու ու քույրերու հետ ըլլալը:

Կհիշեմ... թե ինչպես ծառերու տակ, կանաչներու վրա ընկերներով նստել ու կխոսեինք Հայաստանի պատանիներու ապրած կյանքի մասին, թե ինչպես անոնք բախտավոր են ու երանելի... քանի որ հոն են, իրենց հայրենիքին մեջ կապրին...

Մեզի մեր մեծեր պատմած էին հայրենիքի մասին... ու մենք ալ քիչ չէինք կարդացած անոր մասին գրված գրքեր... Կհիշեմ թե ինչպիսի հափշտակութամբ կդիտեինք թերթերուն ու գրքերուն մեջ տպված նկարները՝ Հայաստանյան ու ինչպիսի ախ ու հառաչով զանոնք կհամբուրեինք կարտասպին...

Կհիշեմ... թե ինչպես ամեն անգամ անձկութամբ կդիտեինք Սովետ Հայաստանն ստացված կինոֆիլմերը: Կսքանչանայինք դիտելով Մայր Հայաստանի գեղատեսիլ բնության տեսարանները, լեռները երկնամերձ, քաղաքներն աննման, պողոտաները ծառազարդ և փողոցները եզերող բարձր ու հոյակապ շենքերը...

Կհիշեմ... թե ինչպես ընկերներով հանդիսատես եղանք Մոսկվայի Կարմիր հրապարակին վրա կատարված ֆիզկուլտուրնիկներու մարզահանդեսը պատկերող ֆիլմին ցուցադրմանը. անկարող եմ նկարագրել այն, զոր զգացինք այդ պահուն, երբ Սովետ հզոր ընտանիքին և մեր անուշիկ Հայաստանին մարզիկները կտողանցեին համաշխարհային արժեքով, կրճերնին առաջ նետած ու հպարտ...

Հուզված էր ողջ հասարակությունը. նույնիսկ մեր արաբ բարեկամները չհանդեպան իրենց բերնեն թոցնելու սքանչական բաղկանությունները: Ընկերներուս ու ինձի վրա թողած տպավորությունը մեծ էր. երկար տոնն մենք մեզի կհամեմատեինք մեր մեծ հայրենիքի կարտառ ու կենսախիղճ մարդկաներու հետ և կխորհեինք թե ճիշդանկութունը պիտի ունենա՞նք արդյոք մի օր մենք ալ նրանց հետ հարազատ հայրենիքում տողանցելու հպարտ ու վեհա... սա խոսքերը կպոռթկային մեր, հայրենիքի կարտեսն խանձված, մատաղ սրտերեն...

Երա՛զ թե իրականություն... կրնա՞յի արդյոք հավատալ աչքերուս...

Ու ահա արդեն Սովետական Հայաստանի, երբեմնի բազմաշարժար հայրենիքիս հողին վրա կապրիմ այժմ... ոչ մի բառով չեմ կարող արտահայտել այն, զոր կփոթորկի, կալեկոծի իմ սիրտը... այդ հասկնալ, ըմբռնել ու զգալ կարող են միայն ինձի նման հազարավոր հայրենադարձ պապանիներ...

Հայաստանի հայրենակիցներու հարց կուտայի հաճախ, թե ե՞րբ է գալու օրը, որ իմ սովնետական եղբայրներու ու քույրերու հետ խիտ շարքերով տողանցենք հպարտորեն... ո՞հ ինչպիսի անձկությամբ կսպասեի այդ օրվան... կուզեի տեփական աչքերով տեսնել այն, զոր դիտած էի միայն էկրաններու կտավին վրա... կուզեի հոն, հեռավոր երկրներու մեջ սնուցած երազներես մեկուն իրականանալը զգալ...

Հայրենակիցներես իմացած էի, որ Հոկտեմբերյան պանծալի հեղափոխության 29-րդ տարեդարձի օրը Լենինի սքանչելի հրապարակին վրա շքերթ տեղի պիտի ունենար:

Անհամբեր էի, կուզեի, որ շուտ, շատ շուտ գար նոյեմբերի 7-ը, սակայն ան կդանդաղեր...

Կըզձայի ինքս ալ մասնակից ըլլալ շքերթին... ու անշափ եղավ իմ ուրախությունը, երբ Պետական համալսարանում զիս հայտնեցին, որ ես ալ տասանողության հետ պիտի մասնակցիմ շքերթին:

Սպասված օրը եկավ վերջապես...

Առավոտուն կանուխ արթնցա, հազա մաքուր շորերս ու դուրս թուա...

Քաղաքն արդեն ոտքի վրա էր:

Արևն իր ոսկի ճառագայթները սփռել էր բարձր, դրոշազարդ շենքերի վրա... Ամենուրեք դրված էին մեր մեծ ու հոգատար հայր Ստալինի մեծադիր նկարները: Արագ կթալի ու ամեն անգամ նորա նկարին հանդիպելուց ինքզինքս կկրկնեի. «Փառք ու երկար կյանք Ձեզի, սիրելի հայր Ստալին, Ձեր շնորհիվ մենք հայրենիք ունեցանք...»

Շտապում էի համալսարան... վախենում էի ուշանալ ու զրկվիլ...

Խիտ շարքեր կազմած փողոց ելանք... բարձրախոսներու նվաղեն կթնդար քաղաքը... Ես կվախենայի, անկարող ըլլամ համընթաց քայլելու ընկերներու հետ...

Շարքերը շարժվիլ սկսան... ու հորդ գետու մը նման ողողեցին փողոցներն ու հրապարակները. հազարավոր դրոշներ շարքերու վրայեն կծածանեին մեղմ ղեփուտեն. փողային նվաղախմբերը կթնդացնեին օդը: Հազարավոր հայրենակիցներ խոնված մայրերու, պատշգամբներու ու տանիքներու

վրա ուրախ ու զվարթ կդիտեին շքերթը: Նրանց մեջ էին նաև հայրենադարձ հայորդիները. անոնք ալ կդիտեին... բայց արցունքն աչքերին... այդ երջանկության անգույն արցունքներ էին, զոր կակոսեին նրանց այտերը...

Կքաղեմ հպարտ ու մտահոգ կնալիմ քոլի ընկերներու... քայլերս չփոթելու համար: Հատանք Լենինի հրապարակը... կանցնեինք թրիբունին առջև... հոս առաջին անգամ ես տեսա ընկեր Հայրությանսին ու Սովետ Հայաստանի կառավարության անդամները, որոնց նկարները միայն տեսած էի: Թրիբունին առջևն պետք էր ավելի կանոնավոր քայլել, ուսկայն պահ մը զիս կորուցի ուրախությունն ու քայլերս դարձյալ չփոթեցի...

Թրիբունի առջևն անցանք խրոխտ ու հպարտ քայլերով... ու ես սրտիս ողջ թափով ուռա՝ գոչեցի անոնց, որոնք մեզի այս օրը բերեցին:

Կուզեի նորեն ու նորեն դառնալ ու կրկին անցնիլ թրիբունին առջև... բայց ավա՞ղ վերջացած էր շքերթը:

Հրապարակին անցնելուց կինո-օպերատորները փնկարահանեին մեզի: Այդ պահուն ես հիշեցի հեռավոր ընկերներու, որոնք մի օր դիտելով այդ նկարը պիտի նշմարեն ինձի... նախանձին... երանի տան... ու ես ալ մտովի երանի կուտայի ինձի...

Ակամա խմբես բաժնավելեն ետքը երբ տուն դարձա, երջանկությունն զինովցած էի կարծես... չէի հավատար ստակավին, որ վաղեմի երազս երջանիկ իրականության մը փոխված էր...

Նստած տանը կխորհեի... ու հիմա ես տեսած, զգացած էի ամենը, ինչ որ հո՞ն, հայրենի երկրեն հեռու կրնար երազ մնալ ընդմիշտ...

Երջանիկ... անսահման երջանիկ ու հրապարտ կզգայի զինքս... քանի ունեի այն, ինչ թանկ է ամեն մարդու համար... հայրենիք ունեի լուսաշող, որու գիրկը դառնալու բախտն ունեցա...

Ու երբե՞ք, երբե՞ք չեմ մոռնա այն մեծ մարդուն՝ հանճարեղ Ստալինին, որուն հավետ երախտապարտ եմ իմ ծաղկող հայրենիքում զտնվելուս համար... իմ երջանիկ ապագայի հեռանկարներուն համար:

